ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ՈՒՂԵՐՁԸ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՐԱԹՈՆԻ ԱՐՑԱԽԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

(Ուղերձը հնչել է մարտի 24-ին Ստեփանակերտի մարզադաշտում)

Հայաստանյաց Եկեղեցվո սիրելի զավակունք՝ Ղարաբաղի քաղաքացիներ,

Որքան եմ ցանկանում այս պահին Ձեզ հետ լինել, Ձեր՝ մեր բոլորի հողի վրա, Ստեփանակերտի մարզադաշտում, երբ այսպես հոծ բազությամբ հավաքվել և ողջունում եք «Հայաստան» Հիմնադրամի կողմից կազմակերպված մարաթոնի սկզբի հանդիսությունը:

Այսօր Աստված նայում է Ձեզ երկնքից, այսօր մեր պատմությունը դիտում է Ձեզ մեր անցյալից, այսօր մեր ներկան սպասում է Ձեր բոլորի պարտականությանը, այսօր, այս պահին մեր գալիք սերունդները սպասում են Ձեր բոլորի այն նվիրվածությանը, որի փաստը պիտի տաք այսօր ոչ միայն Ղարաբաղում, այլև Ձեր ձայնը պիտի հնչե Ղարաբաղի լեռներից մինչ Հայաստան՝ Մայր Հայաստան, մինչև Երևան, մինչև Ս. Էջմիածին, որտեղից ուղղում եմ Ձեզ այժմ այս խոսքը: Նաև մտապատկերում եմ ամբողջ աշխարհով ցրված հայության բոլոր զավակներին: Սիրելիներ, այսօր Դուք կոչված եք մեր բոլորի հետ միասին ասելու ողջ աշխարհին, որ Ղարաբաղը, Արցախ մեր պատմական նվիրական նահանգը կմնա մեր ժողովրդի զավակների ձեռքերի խնամքին առարկա: Այսօր ես հիշում եմ այն երջանիկ օրերը, որ Ձեզ հետ միասին եղա անցնող մայիս ամսին: Իմ անդրանիկ հովվապետական այցելությունը տվեցի Արցախի մեր թեմին: Ինչ հոգեկան պոռթկում էր, ինչ ժողովրդական խանդավառություն էր այդ օրերին:

Վերածննդյան նման մի շարժում, որ ինձ ամբողջովին համակեց, զորացրեց: «Հայաստան» Հիմնադրամը՝ մեր հանրապետության նախագահի կողմից կազմված այդ մարմինը, ողջ հայությունը իր մեջ

ընդգրկող այն կազմակերպությունն է, որի նպատակն է լծվել հայրենաշինական աշխատանքին: Դրա համար ես այսօր կոչ եմ անում ամբողջ մեր ժողովրդին. Դուք, իմ Ղարաբաղի հայորդիք, Դուք այսօր մարաթոնի այս բացումով տվեք փաստը ողջ աշխարհին, թե Դուք պատրաստ եք Ձեր գերագույն կարելին ի գործ դնելու մեր ժողովրդի, մեր պատմական նվիրյալ ժողովրդի հաղթանակի համար, կյանքով հաղթանակի համար:

Մի երգ ունեինք մենք, երբ ես փոքր էի, այդ երգը հաճախ երգում էինք «Մեր հայրենիք յուր քաջ որդվոց սուրբ արյունով պիտի լինի ազատված»: Այսօր ես փոխում եմ բառերը և ասում եմ. «Մեր հայրենիք յուր քաջ որդվոց սուրբ քրտինքով պիտի լինի վերակազմված, վերականգնված հավերժագնաց»: Ահա ինչ ապրումներով ես ողջունում եմ Ձեզ՝ մեր բոլորի Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Եվ իմ խոսքը կնքում եմ իմ ձեռքերով: Այսօր, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, ես բացում եմ այն Ազգային Տուրքի հավաքման նվիրական գործը, որի համար ես ընծայում եմ «Հայաստան» Հիմնադրամի միջոցով մեր Արցախի ժողովրդին 4 միլիոն 200 հազար դրամ՝ Ձեր 4200 քառակուսի կմ նվիրական հողի համար: Հող, որի մեջ կա «հյուլե մը Հայկեն, կայծ մը Արամեն», ինչպես ասում է Դանիել Վարուժանը:

Ես էլ ուզում եմ ավելացնել. «Հող, որի մեջ կա արցունք-յուղի մի կաթիլ Լուսավորչի հավատքի սուրբ կանթեղից, հող, որի մեջ կա Սուրբ Մեսրոպի տառերից, հող, որի մեջ կա Սուրբ Վարդանի սրի փայլը, հող, որի մեջ կա Սարդարապատի հրայրը: Մի խոսքով, այն հողը, որ մենք ենք, մեր հայրերի կտակն է, մեր ապրողների շալակն է, գալիք սերունդների պարտքը, նրանց նվիրական ժառանգը, որպեսզի նրանք էլ փոխանցեն դարերին և Արցախը մնա հավերժացող և ոչ թե միայն սոսկ հիշատակ անցյալի, այլ գնացք դեպի Հայոց պայծառ ապագան»:

Աղոթում եմ Քեզ, Տեր, պահիր անսասան և զորացրու Հիմնադրամն այս, վասն շինության և բարգավաճության Արցախին, ողջ Հայաստանին և համայն հայության՝ Քո երկնային նայվածքին ներքո, Ս. Էջմիածնի օրհնության մեջ:

Ամե՛ն: